

---

**«ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ԲԱՌԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

**ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ**

Հայկական գաղթավայրեր հայտնի են վաղ միջնադարից: Տևական պատերազմների, տնտեսական վատ պայմանների և այլ պատճառներով հայերը հաճախ զանգվածաբար հեռացել են հայրենի երկրից կամ էլ բռնագաղթերի հետևանքով դուրս քշվել բնօրրանից՝ նոր կյանք սկսելով օտար երկրներում, շատ դեպքերում մնայուն ներկայություն հաստատելով այնտեղ: Հայ սփյուռքը, սակայն, իբրև իրողություն, տակավին գոյություն չունի: Այն նոր շրջանի ծնունդ է: 1915 թ. հայոց Մեծ եղեռնից հետո, երբ Արևմտյան Հայաստանը, ապա նաև Կիլիկիան (1922-ին) պարպվեցին հայությունից, աստիճանաբար ձևավորվեց հայկական սփյուռքը:

Պատմական նոր զարգացումները որոշակի ազդեցություն ունեցան հայերենի բառապաշարի վրա: Ակնառու դրսևորումներից են «արտերկրի հայ» («հայրենիքից դուրս ապրող հայ») իմաստն արտահայտող բառային միավորները: Նկատելի է, որ իբրև բառային իրողություններ՝ դրանք հայկական մամուլի էջերում սկսել են երևալ հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսից, սակայն հատուկենտ էին: Ավելի ուշ, երբ կայունացան հայկական համայնքները, իսկ հայ լեզվամտածողության մեջ հաստատվեց «այսինչ երկրի հայ» հասկացությունը, սկսեցին կազմվել **հայ** վերջնաբաղադրիչով բազմաթիվ բարդ բառեր, որոնք այժմ յուրահատուկ իմաստային խումբ են կազմում: Հայերենի բառարաններում հայ ժողովրդի պատմական դաժան ճակատագրի թելադրանքով ստեղծված այդ բառերի ներկայացումը բառարանագիտական ուշագրավ խնդիր է<sup>1</sup>:

«Արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների արձանագրման սկիզբը դրվել է հայերենի թարգմանական բառարաններում: Սույն աշխատանքում քննելու ենք, թե թարգմանական ո՞ր բառարաններում են արձանագրվել իմաստային խմբի միավորները, ի՞նչ բառանյութ է ընդգրկվել, բառերն ինչպե՞ս են թարգմանվել, խոսքիմասային ի՞նչ արժեքներ են վերագրվել նրանց, և, վերջապես, այդ բառերն ինչպե՞ս են ստեղծում սփյուռքի «բառային պատկերը»:

**Առաջին արձանագրումները:** Հայերեն թարգմանական առաջին բա-

---

<sup>1</sup> Հայերեն միալեզվյան բառարանների նյութի մասին տե՛ս **Գ. Գյուրջինյան**, «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի բառարանագրական վերլուծություն / «Էջմիածին», 2017 (լույս կտեսնի առաջիկա համարներից մեկում):

ռարանը, որը համակարգված արձանագրել է «արտերկրի հայ» իմաստային խմբին պատկանող բառերից, Ն. Դադբաշյանի կազմած հայ-ռուսերեն բառարանն<sup>2</sup> է: Նկատենք, որ սա «նախասփյուռքյան»<sup>3</sup> շրջանն է:

Ն. Դադբաշյանի բառարանում արձանագրվել ու թարգմանվել են՝ **եգիպտահայ, թուրքահայ / թրքահայ, տաճկահայ, պարսկահայ, ռուսահայ, կովկասահայ** բառերը<sup>4</sup>: Այս բառերի ընտրությունը պատահական չէ: Երկու մասի բաժանված հայությունն սկսել էին անվանել այն տերություն անունով, որի կազմում գտնվում էր Հայաստանի տրոհված մասը: Օսմանյան Թուրքիայի կամ Տաճկաստանի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի հայերին անվանում էին **թուրքահայ / թրքահայ** կամ **տաճկահայ**: Ռուսական կայսրության հայերին, ինչպես նաև այդ տերության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի հայերին անվանում էին **ռուսահայ**<sup>5</sup>, մասնավորապես Կովկասի հայերին՝ **կովկասահայ**: Այս բառերը ժամանակի ընթացքում ձեռք բերեցին նաև «արևմտահայ» և «արևելահայ» իմաստները: Թվարկված բառերն իրենց մեկ իմաստով են առնչվում «արտերկրի հայ» իմաստային խմբին: Ասվածը մասամբ վերաբերում է **պարսկահայ** բառին: Հայության մի ստվար հատվածը դարերով ապրում էր Պարսկաստանի տիրապետության ներքո՝ բնիկ հայկական հողերի վրա, ինչպես նաև երկրի այլ մասերում:

«Արտերկրի հայ» իմաստային խմբի լիարժեք միավոր է **եգիպտահայ**-ը:

Այս բոլոր բառերը ներկայացնում են հայության նախասփյուռքյան վիճակը: Բառացանկում կարող էին լինել, օրինակ, նաև **հնդկահայ**-ը և **լեհահայ**-ը, որոնք նշանակում են հայկական հին գաղթավայրերի ներկայացուցիչներին: Դրանք բառարանի լույսընծայմանը նախորդող շրջանում և այդ ժամանակ արդեն գործածության մեջ էին: Հմմտ. «Համալսարանին հայերենի դասատուն **լեհահայ** վարդապետ մըն է: ... Ունկնդիրներն են երեք **լեհահայ** կղերացուներ և չորս օտարագրիներ» («Մշակ», 8.02.1905):

Այսուհանդերձ, Ն. Դադբաշյանի բառարանը կարևոր դեր ունի «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների բառարանային մշակման գործում: Այն, անշուշտ, հետագայում որոշակիորեն ազդել է

<sup>2</sup> Յ. Դադբաշյան, Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911:

<sup>3</sup> Եզրույթի մասին տե՛ս Վ. Մատթեոսեան, Հայերը Արժանթինի մեջ (մեկնաբանություն փորձ մը) / «Ինքնության հարցեր» տարեգիրք, Եր., 2002, էջ 124-126:

<sup>4</sup> Հայերեն-օսմաներեն բառարանում (Պ. Չ. Կարապետեան, Մեծ բառարան հայերեն օսմաներեն, Կ. Պոլիս, 1907) ավելի վաղ արձանագրվել են **ֆրանսահայ, ֆրանսահայ** տարբերակները: Մրանք, սակայն, հետագուովող իմաստային խմբին չեն առնչվում, քանի որ նշանակում են «ֆրանսերեն-հայերեն»: Հմմտ. հետևյալ բառարանի վերնագիրը **Գ. Լուսինեան**, Նոր բառգիրք պատկերագրող ֆրանսահայ (G. Lusignan, Nouveau Dictionnaire illustré français-arménien), Փարիզ, 1900:

<sup>5</sup> Տե՛ս Վ. Գյուրջիյան, Ռուսահայ բառի բառարանագրական քննությունը / «Գիտական հոդվածների ժողովածու (նվիրվում է Հր. Աճառյանի ծննդյան 140-ամյակին)», Եր., 2016, էջ 81-95:

նան Ստ. Մալխասյանցի բառարանի բառացանկի վրա<sup>6</sup>: Իսկ Մալխասյանցի բառարանը հայերեն միալեզվյան բառարաններից առաջինն է, որ արձանագրեց խնդրո առարկա բառերից:

Հ. Դադբաշյանի բառարանը կազմված է փնջային սկզբունքով, և մեզ հետաքրքրող բառերը գտնվում են նույնարմատ բառերի փնջում: Այսպես, օրինակ, *պարսկահայ*-ը գետեղվել է *պարսիկ* գլխաբառի ներքո, *պարսկաբարոյ*, *պարսկադէն*, *պարսկական*, *պարսկահպատակ*, *պարսկանալ*, *պարսկերէն* և այլ բառերի փնջում: Նշվել է միայն գոյականի արժեք, թարգմանվել՝ *персидский армянинъ*:

Այդպես էլ *եգիպտահայ*-ը հայտնվել է *եգիպտաբան*, *եգիպտագետ*, *եգիպտաբանություն*, *եգիպտագիտություն*, *եգիպտագիտական*, *եգիպտացի*, *եգիպտացորե(ա)ն*, *եգիպտուհի* բառերի փնջում: Այն ևս գոյական է դիտվել, թարգմանվել նույն մոտեցմամբ՝ *египетский армянинъ*: Նույն ձևով էլ *կովկասաբնակ* գլխաբառի ներքո՝ *կովկասահայ* - *кавказский армянинъ*:

*Թրքահայ*-ը հայտնվել է *թրքաբանություն* գլխաբառի ներքո, *թրքական* ածականի կողքին: Բայց կա նաև այլ *թրքահպատակ* գլխաբառ՝ *թրքանալ*, *թրքասեր*, *թրքատեաց* և ուրիշ բառերով: Իհարկե, այդ բառախմբերը պետք է միավորված լինեին: *Թրքահայ*-ը համարվել է երկարժեք. 1. գոյական՝ *турецкий армянинъ*, 2. ածական՝ *турецко-армянский*, որի համար բերվել է բառակապակցության օրինակ՝ *թրքահայ գրականություն* - *турецко-армянская литература*: *Թուրք* բառի փնջում կա նաև *թուրքահայ*, որից հղվում է *թրքահայ*-ին<sup>7</sup>:

Երկարժեք է նաև *տաճկահայ*-ը, միայն թե արժեքների հերթակա-նությունը տարբեր է, թարգմանությունը՝ *թրքահայ*-ի պես, քանի որ նույնանիշներ են: Այսպես. 1. ած. *турецко-армянский*, բառակապակցությունը՝ *տաճկահայ դատը*՝ *турецко-армянский вопросъ*, 2. գոյ. *турецкий армянинъ*:

*Ռուս* հիմքով կազմված բառերը Դադբաշյանի բառարանում տրվել են հնչյունափոխությանը՝ *ռուսաբանություն*, *ռուերէն* և, բնականաբար, *ռուսահայ*: *Ռուսահայ*-ը *թրքահայ*-ի և *տաճկահայ*-ի նման երկարժեք է համարվել. 1. ած. *русско-армянский*, *ռուսահայ գրականությունը* - *литература русских армянъ* (հմմտ. *թրքահայ գրականություն* - *турецко-армянская литература*), 2. գոյ. *русско-армянинъ*: Վերջինիս համար սպասելի էր *русский / российский армянинъ*, ինչպես որ մյուս բառերի դեպքում է արվել:

Փաստորեն Հ. Դադբաշյանը վեց բառերից երեքը (*եգիպտահայ*, *պարսկահայ*, *կովկասահայ*) համարել է գոյական, երեքը (*ռուսահայ*, *թրքահայ*, *տաճկահայ*)՝ երկարժեք՝ գոյական և ածական: Երկրորդ եռյակում «արևելահայ» և «արևմտահայ» նշանակող բառերն են, թեպետ այդ իմաստների վերաբերյալ բառարանում որևէ ակնարկ չկա:

<sup>6</sup> Հմմտ. Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ.հ. 1-4, Եր., 1944-45:

<sup>7</sup> Տե՛ս Ստ. Մալխասյանցը տալիս է *թուրքահայ / թիրքահայ* տարբերակները, հանձնարարելի չի համարում *թրքահայ*-ը, իբր *թրիք* բառի հետ չշփոթելու նպատակով (տե՛ս հ. 2, էջ 132): Արևմտահայերենում, ի դեպ, *թրքահայ*-ը առաջնային է:

«Արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների բառարանային մշակումը շարունակվեց արևմտահայ իրականության մեջ: Ժամանակագրական առումով Դաղբաշյանի բառարանին ամենամոտը և բառերի ընդգրկումով նկատելին Գ. Լուսինյանի և Կ. Բասմաջյանի աշխարհաբար հայերեն-ֆրանսերեն բառարանն<sup>8</sup> է, որ լույս տեսավ հայոց համար ճակատագրական 1915-ին: Այստեղ ևս կան հայության ստվար հատվածների ներկայացուցիչներին անվանող բառեր՝ *տաճկահայ, թրքահայ, ռուսահայ* և *պարսկահայ*, հայկական հին գաղութների ներկայացուցիչների՝ *հնդկահայ, հունգարահայ* և *ռումանահայ*<sup>9</sup>, ինչպես նաև *անգլիահայ* և *պուլկարահայ*, ընդամենը 9 միավոր:

*Հունգարահայ, պարսկահայ, պուլկարահայ* և *ռումանահայ* բառերը միայն գոյականի արժեքով են ներկայացված՝ Arménien de Hongrie, Arménien de Perse, Arménien de la Bulgarie և Arménien de Roumanie, այսինքն՝ «Հունգարիայի / Պարսկաստանի / Բուլղարիայի / Ռումինիայի հայ»: *Տաճկահայ*-ը ևս գոյականի արժեքով է՝ Arménien de Turquie, ընդ որում՝ նույն բառահոդվածում տրված է նաև ոչ հաճախադեպ *տաճկահայաստանցի* կազմությունը:

*Ռուսահայ*-ը տրված է երկու արժեքով, գոյականի՝ Arménien de la Russie, և ածականի՝ Arménien de Russie, բառակապակցության նմուշօրինակով՝ *ռուսահայ* գրականություն – littérature arménienne de Russie:

Տարբեր են *հնդկահայ, թրքահայ* և *անգլիահայ* բառահոդվածները. սրանց միայն մեկ իմաստն է նշանակում «արտերկրի հայ» (և առնչվում դրան): Այսպես, *հնդկահայ*-ի առաջին՝ գոյականի իմաստը՝ Arménien des Indes («Հնդկաստանի հայ»), ածականականը՝ indo-arménien: *Թրքահայ*-ի դեպքում տեղերը փոխված են, առաջին իմաստը ածականականն է՝ turco-arménien, երկրորդը՝ գոյականականը՝ Arménien de Turquie («Թուրքիայի հայ»): Պատկերը նույնն է *անգլիահայ*-ի դեպքում՝ Arménien d'Angleterre («Անգլիայի հայ») (գոյ.) և anglais-arménien (աձ.):

Նույն բառարանում միայն ածականի արժեքով և մեկ իմաստով են ներկայացված *հայ* վերջնաբաղադրիչով *ամերիկահայ* - arméno-américain, *լատինահայ* - latin-arménien, arménien-romain, arménien-latinisant (նշանակում է «լատիներեն-հայերեն, լատինաբան հայերեն») և *ֆրանսահայ* - français-arménien («ֆրանսերեն-հայերեն») բառերը:

Փաստացի այս բառարանը «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների ընդգրկմամբ գերազանցում է Հ. Դաղբաշյանի բառարանին:

**Հայերեն-անգլերեն բառարաններ:** Ժամանակի ընթացքում թարգմանական բառարաններում ընդլայնվում է «արտերկրի հայ» իմաստային խմբին պատկանող բառերի շրջանակը: Այդպես ինչ-որ չափով, թեպետ բավականին աղոտ, ուրվագծվում է հայկական գաղթավայրերի

<sup>8</sup> Տե՛ս Գ. Լուսինյան, Կ. Յ. Բասմաջյան, Առձեռն բառարան հայերեն աշխարհիկ լեզուի ֆրանսերեն, Կ. Պոլիս, 1915:

<sup>9</sup> Սպասելի *լեհահայ*-ը և *եգիպտահայ*-ը չկան:

«աշխարհագրությունը»: Այս կարգի բառերի զետեղումը թարգմանական բառարաններում միաժամանակ նաև պատմական-ճանաչողական որոշակի նպատակ է հետապնդում:

«Արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների ընդգրկմամբ առանձնանում է հատկապես Մ. Գույումձյանի (արևմտա)հայերեն-անգլերեն ընդարձակ բառարանը<sup>10</sup>: Այստեղ արձանագրվել և անգլերեն են թարգմանվել մեզ հետաքրքրող բառերից 17-ը: Հարկ է նկատի ունենալ, որ այս իմաստային խմբի միավորների բառարանագրական մեծ փորձ չկար, ուստի 17-ը փոքր թիվ չէ: Բառարանում ընդգրկված բառերն են **ամերիկահայ, անգլիահայ, եգիպտահայ, թրքահայ, իտալահայ, լեհահայ, լիբանահայ**<sup>11</sup>, **կոլկասահայ, հնդկահայ, հունգարահայ, յունահայ, սլավոնահայ, պուլկարահայ**<sup>12</sup>, **ռուսահայ, ռուսահայ, տաճկահայ, ֆրանսահայ**: Բացակայում են ընդհանուր անունները՝ **գաղութահայ** և **սփիւռքահայ**:

Մ. Գույումձյանի բառարանի նախորդները զգալի չափով առաջ էին տարել «արտերկրի հայ» նշանակող բառերի բառարանային մշակման գործը: Գ. Լուսինյանի և Կ. Բասմաջյանի հայերեն-ֆրանսերեն բառարանում իբրև գլխաբառ արձանագրվել է «երկրանուն+հայ» կաղապարով կազմված 9 բառ, Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում՝ 10, որոնք անվանում են հայության սովոր հատվածների, հայ ժողովրդի պատմության մեջ էական դերակատարմամբ հայտնի մի շարք համայնքների ներկայացուցիչներին: Մ. Գույումձյանի բառարանում դրանց ավելացել են նորերը՝ **իտալահայ, լիբանահայ, յունահայ**, մեզ հետաքրքրող իմաստով՝ նաև **ֆրանսահայ**-ը: Այդպիսով ընդլայնվել է խնդրո առարկա բառերի շրջանակը, որը նկատելի նպաստ է «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների բառարանային գրանցման գործում:

Մ. Գույումձյանի բառարանում հիշյալ բոլոր բառերը համարվել են գոյականներ, **ֆրանսահայ**-ին վերագրվել է միայն ածականի արժեք<sup>13</sup>: Այնինչ վերջինիս անգլերեն թարգմանությունը մյուսների նման է (French-Armenian, Armenian, living in France) և երկրորդ մասով բառի գոյականական արժեքն է ներկայացնում: Հայտնի է, որ իմաստային խմբի բոլոր միավորները երկարժեք են. ունեն ինչպես գոյականի, այնպես էլ ածականի արժեք: Բառարանագիրը նախընտրել է դրանցից մեկը:

Բառերի անգլերեն թարգմանությունը ներկայացնելիս բառարանագիրը որդեգրել է մի քանի մոտեցում.

ա) «օտար երկրանուն / ազգության անունը+հայ». Rumanian Armenian - **ռուսահայ**, Persian Armenian - **սլավոնահայ** (5 բառ),

<sup>10</sup> Տե՛ս Մ. Գույումձյան, Ընդարձակ բառարան հայերեն անգլիերեն, Կահիրե, 1950:

<sup>11</sup> Բառարանում այսպես է, առհասարակ ընդունված է **լիբանահայ** տարբերակը:

<sup>12</sup> Ի դեպ, **իտալահայ**-ը, **լիբանահայ**-ը և **պուլկարահայ / բուլղարահայ**-ը արևելահայերենի և արևմտահայերենի բացատրական ընդարձակ բառարաններում առայսօր գլխաբառ չեն դարձել:

<sup>13</sup> **Անգլիահայ**-ի խոսքիմասային արժեքի մասին նշումը վրիպմամբ բացակայում է: Նրա British Armenian թարգմանությունը հուշում է **բրիտանահայ** բառի մասին, որը բառարանը չունի:

բ) «*հայ*+օտար երկրանունը / ազգության անունը». Armenian-American – **ամերիկահայ**, Armenian-Indian – **հնդկահայ** (5 բառ),

զ) «այսինչ երկրում ապրող հայ». Armenian living in Egypt – **եգիպտահայ**, Armenian living in Poland – **լեհահայ** (3 բառ):

Մեկական բառի դեպքում նկատվում են տարբեր զուգակցումներ.

ա) «*հայ*+օտար երկրանունը / ազգության անունը» և «այսինչ երկրում ծնված հայ». Armenian Greek<sup>14</sup>, Armenian born in Greece – **յունահայ**,

բ) «օտար երկրանունը / ազգության անունը+*հայ*» և «այսինչ երկրում ապրող հայ». French-Armenian, Armenian living in France – **ֆրանսահայ**,

գ) «այսինչ երկրի հայ» և «այսինչ երկրում ապրող հայ». Armenian of Turkey, Armenian living in Turkey – **տաճկահայ** :

Անսովոր է (թերևս վրիպման հետևանք) **հունգարահայ**-ի Arm-hungarian թարգմանությունը:

Իմաստային միևնույն խմբին պատկանող և համանման կառուցվածք ունեցող բառերի թարգմանության այսպիսի խայտաբղետությունն արդարացված չէ: Թեև գիտենք, որ այդ բառերը կարող են մեկնաբանվել որպես «այսինչ երկրի հայ», «այսինչ երկրում ծնված հայ», «այսինչ երկրում ապրող հայ», նաև «այսինչ երկրի հպատակ՝ քաղաքացի հայ» և այլն: Անհասկանալի է մնում, թե թարգմանական ի՞նչ մոտեցմամբ են բառերը հենց այդ կերպ զանազանվել, հատկապես այն դեպքերում, երբ բառարանագիրը թարգմանելիս դիմել է իմաստային տարբեր զուգակցումների:

Մ. Գույումճյանի կազմած հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն ընդարձակ բառարանները վերջին տարիներին համառոտվել են, արդիականացվել և հրատարակվել մեկ գրքով<sup>15</sup>: Նորացված բառարանի բացատրական խոսքում նշված է, որ վերատեսության ժամանակ զեղչվել են անգործածական դարձած մի շարք բառեր, ավելացվել շուրջ 1700 մերօրյա բառեր: Տեսնենք, թե ի՞նչ ճակատագրի են արժանացել «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորները:

Իմաստային խմբի միավորներից այստեղ մնացել են չորսը՝ **թրքահայ**, **ռուսահայ**, **ֆրանսահայ**, որ կան Գույումճյանի բառարանում, ավելացվել է **սփիւռքահայ**՝ Armenian of the diaspora: Աներկբա պիտի ասել, որ ավելացումն ուղղակի անհրաժեշտ էր: Ձեռնումների մի մասն արդարացված չէ: Մակայն ընդարձակ բառարանից պահպանված երեք բառերից պակաս գործածական չեն, օրինակ, **ամերիկահայ**-ը կամ **պարսկահայ**-ը, կամ էլ պիտի զեղչվեր **ֆրանսահայ**-ը ևս: Այդ դեպքում նորացված բառարանում կմնային ընդհանուր անուն **սփիւռքահայ**-ը և հայության երկու ստվար հատվածների ներկայացուցիչներին անվանող **ռուսահայ**-ը և **տաճկահայ**-ը:

<sup>14</sup> Բառարանում փոքրատառ է, ինչպես **թրքահայ**-ի թարգմանության մեջ՝ turk-ը:

<sup>15</sup> Տե՛ս Մեսրոպ Կ. Գույումճեան, Գրպանի նոր բառարան. անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն, այժմեականացուց Լ. Թորոսեան, Բեյրութ, 2002:

Նոր բառարանում պահպանվել են Գույումձյանի թարգմանությունները՝ *Ֆրանսահայ*-French-Armenian, *ռուսահայ*-Russian-Armenian: *Թրքահայ*-ի Armenian-turk անհաջող թարգմանությունը ամբողջովին փոխվել է, և դա դրական քայլ է: Նոր թարգմանության մեջ նկատի են առնվել բառի երկու իմաստներն էլ՝ Western Armenian («արևմտահայ»), Armenian from Turkey: Բառի երկրորդ իմաստի համար կարելի էր օգտագործել *տաճկահայ*-ի թարգմանությունը, որ տալիս է Գույումձյանը՝ Armenian of Turkey, Armenian living in Turkey, կամ նրա մի բաղադրիչը: Արդիականացված բառարանում բառերի խոսքիմասային արժեքներն առհասարակ նշված չեն. դա բառարանագրական թերություն է:

Մ. Գույումձյանի բառարանը կարևոր դեր է խաղացել «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների բառարանային գրանցման հարցում, իսկ բառերի թարգմանության առումով որոշակիորեն ազդել է հայաստանյան և սփյուռքյան նույնատեսակ հետագա բառարանների վրա:

Ն. Բարաթյանի «Հայերեն-անգլերեն բառարանում»<sup>16</sup> (պարունակում է 50 000 բառ և բառակապակցություն) խնդրո առարկա բառերից 12-ն են արձանագրվել՝ *ամերիկահայ, անգլիահայ, եգիպտահայ, թուրքահայ, հունահայ, հունգարահայ, պարսկահայ, ռումինահայ, ռուսահայ, սփյուռքահայ, տաճկահայ, ֆրանսահայ*: Մեր կարծիքով, այս բառարանի բառացանկի վրա մեծապես ազդել է հայ-ռուսերեն ակադեմիական բառարանը: Եթե համեմատենք, կնկատենք, որ տարբերությունն ընդամենը երկու բառ է. այստեղ չկան հայ-ռուսերեն բառարանի *գաղութահայ* և *հնդկահայ* բառերը միայն: Ըստ երևույթին *գաղութահայ*-ը համարվել է արևելահայերենում քիչ գործածվող, իսկ *հնդկահայ*-ը գեղջվել է թերևս այն պատճառով, որ գաղութն այսօր սակավամարդ է, ոչ հայախոս, բառն էլ աստիճանաբար ավելի քիչ է գործածվում:

«Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի ներկայացման և թարգմանության հարցում նկատելի է Մ. Գույումձյանի բառարանի ազդեցությունը: Բառարանագիրը, սակայն, կարողացել է հաղթահարել մեզ հետաքրքրող բառերի թարգմանական խայտաբղետությունը, որի մասին արդեն խոսել ենք:

Իմաստային խմբի բառերը Ն. Բարաթյանի բառարանում առավելաբար համարվել են գոյականներ և թարգմանվել այսպես՝ *ամերիկահայ*-American Armenian, *ռումինահայ*-Roumanian Armenian, *ռուսահայ*-Russian Armenian և այլն:

Միայն երկու բառ է ձևաբանորեն երկարժեք դիտվել: Մեկի դեպքում յուրաքանչյուր արժեքի համար մեկ իմաստ և թարգմանություն է տրվել, այսպես. *ֆրանսահայ*- գոյական French Armenian, ածական referring to French Armenians (Գույումձյանի բառարանում սա միակն է, որ ածական է համարվել): *Անգլիահայ*-ի դեպքում (Գույումձյանի բա-

<sup>16</sup> Տե՛ս Ն. Ռ. Բարաթյան, Հայերեն-անգլերեն բառարան, Եր., 2002:

ռարանում սրա խոսքիմասային արժեքը նշված չէ) նման տրոհում չկա, պարզապես նշվել է *գ., ա.* և տրվել թարգմանությունը՝ British Armenian, որը վերոբերյալներից ոչնչով չի տարբերվում: Ուստի կա՛մ սա էլ մյուսների նման միայն գոյական պիտի համարվեր (սուսկ միասնականությունը պահպանելու նպատակով), կա՛մ համապատասխան թարգմանություն ունենար, և, վերջապես, բոլոր մնացածը պետք է համարվեին տարարժեք, որը լավագույն լուծումը կլիներ:

Բառերի թարգմանության ժամանակ բառարանագիրը միասնականություն է դրսևորել՝ հիմնականում կիրառելով «օտար երկրանուն / ազգության անուն+հայ» կաղապարը, ինչպես Egyptian Armenian – **եգիպտահայ**, Hungarian Armenian – **հունգարահայ**: Այդ առումով տարբերվում է **տաճկահայ**-ը, որը բազմիմաստ է: Կաղապարային դարձած (դրական իմաստով) Turkish Armenian թարգմանությունից զատ, այստեղ տրվել է նաև «Թուրքիայում ապրող հայ» իմաստային բաղադրիչը՝ Armenian living in Turkey, ապա՝ բառի երկրորդ իմաստը՝ «արևմտահայ» - Western Armenian: Ի դեպ, հոմանիշ **թուրքահայ**-ի դեպքում կիրառվել է Turkish Armenian կաղապարային թարգմանությունը:

**Միջուրքահայ**-ը թարգմանվել է diaspora Armenian, որին դժվար է համաձայնվել: Ընդունելի են diasporan Armenian, Armenian of Diaspora թարգմանությունները:

Ս. Սեֆերյանի և գործընկերների կազմած բառարանի<sup>17</sup> հայերեն-անգլերեն մասում (շուրջ 22 000 բառ է պարունակում), մեզ հետաքրքրող բառերից հանդիպում է միայն մեկը՝ **ամերիկահայ**-ը՝ գոյականի արժեքով, American Armenian թարգմանությամբ: Մպասելի էին նաև **անգլիահայ** / **բրիտանահայ**-ը և **սփիւրքահայ**-ը, որոնց առկայությունը, մեր կարծիքով, պարտադիր պիտի համարվեր:

Պ. Բեդիրյանի կազմած բառարանը<sup>18</sup>, նախորդների հետ համեմատած, ընդարձակ չէ (պարունակում է շուրջ 6400 բառ), բայց խնդրո առարկա բառերից այստեղ, այնուամենայնիվ, արձանագրվել են: Դրանք երեքն են՝ **սփիւրքահայ**, **տաճկահայ**<sup>19</sup> և **ֆրանսահայ**: Ենթադրելի է, թե ինչու այստեղ չկան, օրինակ, **ամերիկահայ** կամ **անգլիահայ (բրիտանահայ)** և նման այլ բառեր. անշուշտ սահմանափակ ծավալի պատճառով: Այդ դեպքում հարց է առաջանում, թե այստեղ ինչո՞ւ կան **ֆրանսահայ**-ը, անգամ **ֆրանսահայություն**-ը: Թերևս այն պատճառով, որ **ֆ**-ով սկսվող հայերեն կազմությունների թիվը խիստ սահմանափակ է, բառարանագիրը գուցե դրա համար է ընդգրկել հիշյալ բառերը: Այլապես փոքրածավալ բառարանում դրանք տեղ չպիտի ունենային: Գուցեն տեղ չպիտի ունենային մեր հիշատակած բառերը ևս, թեև **ամերիկահայ**-ը և

<sup>17</sup> Տե՛ս Ս. Սեֆերյան, Լ. Հովհաննիսյան և ուրիշներ, Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն բառարան, Եր., 2009:

<sup>18</sup> Տե՛ս Պ. Բեդիրյան, Հայերեն-անգլերեն, անգլերեն հայերեն գործնական բառարան, Եր., 2010:

<sup>19</sup> Սա հղվում է **արեւմտահայ**-ին, այսինքն՝ մեզ հետաքրքրող իմաստը չէ:



*անգլիահայ (բրիտանահայ)*-ն անմիջականորեն առնչվում են ամերիկյան և անգլիական (բրիտանական) իրականությանը:

Յուրաքանչյուր բառի համար նշվում են խոսքիմասային արժեքները: Այսպես, *ֆրանսահայ*-ը համարվել է գոյական և ածական՝ French Armenian, *սփյուռքահայ*-ի դիմաց նշում չկա, բայց քանի որ տրված է սեռականի –ի մասնիկը, հասկանալի է դառնում, որ այն գոյական է համարվել, թարգմանությունը՝ Armenian of Diaspora:

**Հայերեն-ռուսերեն բառարաններ:** Իմաստային խմբի բառերի ընդգրկմամբ առանձնանում է Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Հայ-ռուսերեն բառարանը»<sup>20</sup> (պարունակում է շուրջ 75 000 բառ): Այստեղ արձանագրվել և ռուսերեն թարգմանվել-բացատրվել է ինդրո առարկա բառերից 14-ը՝ *ամերիկահայ, անգլիահայ, գաղութահայ, եգիպտահայ, թրքահայ / թուրքահայ, հնդկահայ, հունահայ, հունգարահայ, պարսկահայ, ռումինահայ, ռուսահայ, սփյուռքահայ, տաճկահայ, ֆրանսահայ*: Սա հայ-ռուսերեն բառարանագրության մեջ բացառիկ ցուցանիշ է<sup>21</sup>:

Բառացանկ կազմողներն առավելաբար հիմք են ընդունել արևելահայերենի բացատրական բառարանները, քանի որ ընդգրկված բառերից և ոչ մեկը նոր գրանցված չէ, այլ կրկնում է նախորդներին (նրանց հետ համեմատած բացակայում են *արգենտինահայ, թիֆլիսահայ, լեհահայ, կովկասահայ, չեքոսլովակահայ, պոլսահայ, պոլսեցի*): Դա մասամբ բնական կարելի է համարել, սակայն մյուս կողմից տարօրինակ է բառացանկի հարցում ինքնուրույն մոտեցման բացակայությունը. օրինակ՝ կա ակադեմիական բացատրական բառարանի *վիրահայություն*-ը, բայց նրա հետևողությամբ չկա *վիրահայ / վրացահայ*-ը:

Մշակվել և կիրառվել է բառահոդվածի ընդունելի մի կաղապար. այն է՝ գլխաբառ *անգլիահայ*, բառի արժեքները և իմաստները՝ 1. գ. Армянин, проживающий в Англии, 2. ш. Относящийся к армянам, живущим в Англии, գործածությունը բառակապակցությամբ՝ անգլիահայ գաղութ-արмянская колония в Англии: Իմաստային խմբի բառերի մեծ մասը երկարժեք է դիտվել, ածականի իմաստը համանման թարգմանությամբ է ներկայացվել:

Բառարան կազմողները և խմբագիրը, սակայն, հետևողական չեն եղել. որոշ բառեր միայն գոյականի արժեքով են թարգմանված, ինչպես *թուրքահայ*-турецкий армянин, *հնդկահայ*-армянин, живущий в Индии, *պարսկահայ*-армянин, проживающий в Иране: Ինչպես տես-

<sup>20</sup> Տե՛ս Հայ-ռուսերեն բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 1984:

<sup>21</sup> Լեզվի ինստիտուտի աշխատակիցների կազմած հայ-ռուսերեն նախորդ բառարանը (Ա. Ղարիբյան, Ե. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան, Հայ-ռուսերեն բառարան, Եր., 1960) պարունակում է շուրջ 40 000 բառ, և որտեղ «արտերկրի հայ» իմաստային խմբի ոչ մի միավոր չկա, ներառյալ *սփյուռքահայ*-ը: Այդպես է նույն ժամանակաշրջանում լույս տեսած մեկ այլ բառարանում՝ Ռ. Մելքումյան, Ա. Մեկոյան, Հայ-ռուսերեն դպրոցական բառարան (Եր., 1963. պարունակում է շուրջ 10 000 բառ):

նում ենք, հիշյալ կաղապարից շեղումներ կան նաև թարգմանության ժամանակ: Բառերի գոյականական իմաստը, օրինակի համար, ներկայացված է քերականական տարատեսակ ձևավորմամբ.

ա) «օտար երկրանունը / ազգության անունը (արտահայտված ածականով) + *հայ*». румынский армянин-***ռումիհնահայ***, турецкий армянин-***թուրքահայ, տաճկահայ*** (4 բառ),

բ) «այսինչ երկրում ապրող հայ». армянин, живущий в Египте - ***էգիպտահայ***, армянин, проживающий во Франции-***ֆրանսահայ*** (5 բառ),

գ) «հայ այսինչ երկրից». армянин из Венгрии-***հունգարահայ***, армянин из Греции-***հունահայ*** (2 բառ):

Երկու բառի դեպքում միևնույն բառահոդվածում վերը բերվածների գուգակցում կա: Այսպես՝ «այսինչ երկրում ապրող հայ» և «այսինչ երկրի հայ». армянин, живущий в Америке, американский армянин-***ամերիկահայ*** և հակառակը՝ российский армянин, армянин, проживающий в России-***ռուսահայ***: Այս բազմազանությունը մասամբ հիշեցնում է Մ. Գույումճյանի բառարանը, բայց պետք է նկատել, որ նրա չափ խայտաբղետությունն այստեղ չկա:

**Այլ նկատառումներ:** ***Մփյուռքահայ*** բառի թարգմանության մեջ (армянин из зарубежной армянской колонии) բացակայում է диаспора-ն, որ չկա նաև ***սփյուռք*** բառահոդվածում (армянские колонии за рубежом): Շատ ավելի հստակ կլիներ, օրինակ, եթե ասվեր армянская диаспора: ***Գաղութահայ***-ի армянин-колонист թարգմանությունն օգտագործվել է բառի ածականական իմաստը դրսևորելու համար՝ относящийся к армянам-колонистам («գաղութահայերին՝ գաղութաբնակ հայերին վերաբերող»), սակայն դուրս է մնացել իմաստային մի կարևոր բաղադրիչ՝ «հայկական գաղութներին վերաբերող»-относящийся к армянским колониям:

***Ռուսահայ***-ի գոյականական իմաստը՝ российский армянин, армянин, проживающий в России, երկրորդն է, իսկ առաջինը ածականականն է՝ русско-армянский, որ հասկացվում է ***ռուս-հայկական, ռուս-հայերեն***: Այդպես է մեկ-երկու այլ դեպքերում՝ ***հունահայ***-греко-армянский, ***ռումիհնահայ***-румынско-армянский: Փաստորեն այն, ինչ տեսանք վերևում ***անգլիահայ***-ի օրինակով, այստեղ չի կիրառվել: Այս առումով խնդրո առարկա բառերի բառարանային մշակման ժամանակ տարբեր մոտեցումներ են կիրառվել, և բառահոդվածները խայտաբղետ պատկեր են ներկայացնում:

Ճիշտ կլիներ (մասնավորապես արտայեզվական առումով), օրինակ, ***պոլսահայ*** բառի ներմուծումը բառացանկ, հատկապես որ կա ***պոլսական***-ը՝ константинопольский թարգմանությամբ:

Ա. Մեկոյանի բառարանում<sup>22</sup> խնդրին պարզ լուծում է տրվել. իմաս-

<sup>22</sup> Տե՛ս Ա. Մեկոյան, Հայ-ռուսերեն ուսումնական բառարան, Եր., 1986:

տային խմբից արձանագրվել է միայն *սփյուռքահայ*-ը: Դա թելադրված է մասնավորապես բառարանի ծավալով (16 200 բառ): Նշվել է բառի երկու արժեք (գոյ. և ած.), սակայն թարգմանությունը վերաբերում է միայն գոյականի արժեքին. армянин, живущий на чужбине (вне Советского Союза): Խորհրդային շրջանում *սփյուռքահայ*-ն այդպես էլ ընկալվում էր՝ «օտարության մեջ (Խորհրդային Միությունից դուրս) ապրող հայ», թեև խորհրդային հանրապետություններում ապրող հայերի համար կիրառության մեջ էր նաև *ներքին սփյուռք* բառակապակցությունը:

Պ. Բեդիրյանի, Դ. Անմեդիկյանի և Ջ. Ղարիբյանի «Ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարանում»<sup>23</sup>, որը հրատարակվել է հայ-ռուսերեն ակադեմիական մեծ բառարանից երեք տարի անց, գետեղվել են իմաստային խմբի միջուկային միավոր *սփյուռքահայ*-ը, ինչպես նաև տեսականիշ *ամերիկահայ, ռումինահայ, ֆրանսահայ* բառերը: Դրանք ներկայացվել են այսպիսի մոդելով. հայերեն գլխաբառը՝ *ֆրանսահայ*, արժեքները (գոյ. և ած.)՝ անհրաժեշտ օրինակներով. 1. с. армянин из Франции, 2. п. ~ գաղութ армянская колония во Франции; ~ армянский писатель из Франции: Ճիշտ նույնպես է *ռումինահայ* բառի դեպքում: Սկզբունքը մասամբ խախտվել է *ամերիկահայ*-ի դեպքում. չեն նշվել բառի ձևաբանական արժեքները, որոնք, սակայն, օրինակների միջոցով կոռահելի են:

Քանի որ բառարանում կիրառվել է բառահողվածի կառուցման փնջային սկզբունքը, ուստի վերոհիշյալ բառերի հետ նույն տեղում՝ գլխաբառից և նրա թարգմանություն-բացատրությունից հետո, ներկայացվում է նրանից կազմված հավաքական գոյականը: Այսպես, *սփյուռքահայ* армянин из диаспоры (из-за рубежа) // ~ *ուրթուն* ...: Մյուս բառերի դեպքում սկզբունքը չի գործել: Այս փորձը, ինչ խոսք, օգտակար է, ուստի հարկավոր է նկատի ունենալ և կիրառել հայ բառարանագրության մեջ:

Պատկերը գրեթե անփոփոխ է նույն հեղինակների մեկ այլ բառարանում<sup>24</sup>, միայն *ամերիկահայ* և *ռումինահայ* բառահողվածների կապակցություններում *գաղութ*-ը փոխարինվել է *համայնք*-ով (*ֆրանսահայ*-ի դեպքում՝ ոչ), ռուսերեն թարգմանության մեջ էլ колония-ի փոխարեն община է, փակագծում նաև диаспора (*ամերիկահայ*-ի դեպքում չի կիրառվել):

**Հայ(երեն)-ֆրանսերեն բառարաններ:** Հատկապես Գ. Լուսինյանի և Կ. Բասմաջյանի հայերեն-ֆրանսերեն բառարանը լավ սկզբնավորել է այս իմաստային խմբի միավորների բառարանային մշակման գործը: Հետագա մի շարք բառարաններ, սակայն, զոնե հետազոտվող բառերի առումով, չեն օգտվել այս բառարանի փորձից:

<sup>23</sup> Տե՛ս Պ. Բեդիրյան, Դ. Անմեդիկյան, Ջ. Ղարիբյան, Ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարան, Եր., 1987:

<sup>24</sup> Տե՛ս Պ. Բեդիրյան, Դ. Անմեդիկյան, Ջ. Ղարիբյան, Հայ-ռուսերեն գործնական բառարան, Եր., 2010:

Մ. Հովհաննեսյանի հայերեն-ֆրանսերեն բառարանում<sup>25</sup> տեղ են գտել **ռումանահայ, ռուսահայ** և **տաճկահայ** բառերը: Դիտվել են գոյականներ, թարգմանվել նույն կերպ՝ *arménien de Roumanie / Russie / Turquie* («Ռուսահայի / Ռուսաստանի / Թուրքիայի հայ»): **Տաճկահայ**-ը և **ռուսահայ**-ը ներկայացնում են հայության երկու մեծ հատվածների արևմտահայության և արևելահայության ներկայացուցիչներին, ուստի դրանց ընդգրկումը բառացանկ լիովին հասկանալի է և ճիշտ: Տարակուսանք է հարուցում, թե մասնավոր անուններից ինչու է հենց **ռումանահայ**-ն ընտրվել (թեև հայտնի է, որ ռումինահայ գաղութը հին և կարևոր գաղութներից է եղել) և ոչ, ասենք, **պարսկահայ**-ը:

Մ. Գասպարյանի բառարանում<sup>26</sup> (37 հազար բառ) «արտերկրի հայ» իմաստային խմբի բառերը շրջանցվել են: Միայն մեկ բառափնջում **ամերիկական**-ի, **ամերիկահայատակ**-ի, **ամերիկացի**-ի հետ, թերևս պատահաբար, տրված է **ամերիկահայ**-ը *arméno-américain* թարգմանությամբ: Բառարանում առհասարակ չկան **սփյուռք**-ը և **սփյուռքահայ**-ը, **ֆրանսիական**-ը և **ֆրանսիացի**-ն պարունակող բառափնջում **ֆրանսահայ**-ը և այլն:

Թ. Թագվորյանի բառարանում<sup>27</sup> (60 հազար բառ) «արտերկրի հայ» իմաստային խմբի բառերից ընդգրկվել են սրանք՝ **թրքահայ, հնդկահայ, պարսկահայ, պուլկարահայ, ռումանահայ, ռուսահայ, սփյուռքահայ, տաճկահայ, ֆրանսահայ**, ընդամենը ինը միավոր: Նկատելի է Լուսինյան-Բասմաջյանի բառարանի ազդեցությունը. դրանից այստեղ չկան **անգլիահայ**-ը և **հունգարահայ**-ը, ավելացել են **սփյուռքահայ**-ը և **ֆրանսահայ**-ը՝ արդեն «Ֆրանսիայի հայ» իմաստով (20-րդ դարասկզբին այն նշանակում էր «ֆրանսերեն-հայերեն»):

Մի քանի բառի դեպքում կիրառվել է թարգմանական նույն կաղապարը՝ «տվյալ երկրի հայ»: Այսպես **թրքահայ** - *Arménien de Turquie*, **հնդկահայ** - *Arménien de l'Inde*, **պարսկահայ** - *Arménien de Perse*, **պուլկարահայ** - *Arménien de Bulgarie*, այդպես էլ **սփյուռքահայ** - *Arménien de la diaspora*:

Այլ դեպքերում թարգմանության մեջ նշվում են տարբեր հանգամանքներ

ա) տվյալ երկրում ծնված լինելու. **տաճկահայ**-*Arménien natif de Turquie*-«Թուրքիայում ծնված հայ» (բառը հղվում է **թրքահայ**-ին),

բ) տվյալ երկրից ծագած կամ եկած լինելու. **թրքահայ**-(origine կամ venant de) *Arménien de Turquie*<sup>28</sup>,

գ) տվյալ երկրում ծնված լինելու կամ բնակվելու. **ֆրանսահայ**-*Arménien natif de France*-«Ֆրանսիայում ծնված հայ» կամ *qui réside en France*-«հայ, որը բնակվում է Ֆրանսիայում»,

դ) տվյալ երկրից եկած լինելու. **պարսկահայ**-*Arménien de Perse*-«Պարսկաստանի հայ» կամ *venant de Perse*-«Պարսկաստանից եկած»,

<sup>25</sup> Տե՛ս Մ. Յովհաննեսյան, Բառարան հայերեն-ֆրանսերեն, Կ.Պոլիս, 1925:

<sup>26</sup> Տե՛ս Մ. Գասպարյան, Հայ-ֆրանսերեն բառարան, Եր., 1999:

<sup>27</sup> Տե՛ս Թ. Թագվորյան, Աշխարհաբար հայերեն-ֆրանսերեն լեզուաբանական և բացատրական բառարան, Փարիզ, 2000:

<sup>28</sup> Բառարանում նկատվում են մեծատառի գրության վրիպակներ:



զ) **Հայ-ադրբեջաներեն բառարան**<sup>33</sup>: Ռ. Բադրամյանի և Ի. Խալիլովի բառարանը (պարունակում է 50 000 բառ և բառակապակցություն) առանձնանում է «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների ընդգրկմամբ: Արձանագրվել և թարգմանվել են *ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, գաղութահայ, եգիպտահայ, լեհահայ, հնդկահայ, հունահայ, հունգարահայ, չերքեզահայ, պարսկահայ, պոլսահայ, ռումինահայ, ռուսահայ, սփյուռքահայ, տաճկահայ, ֆրանսահայ* բառերը, ընդամենը 17 միավոր: Բառընտրության հարցում նկատելի է հատկապես ակադեմիական բացատրական բառարանի<sup>34</sup> ազդեցությունը: Նրա համեմատությամբ իմաստային խմբի միավորներից այստեղ պակասում են *թիֆլիսահայ*-ը, *կովկասահայ*-ը և *թուրքահայ*-ը (*տաճկահայ*-ը կա), որևէ նոր բառ չի ավելացվել:

Բառարանը բառերի խոսքիմասային արժեքները չի նշում, այլ միայն թարգմանությունն է տալիս միևնույն մոտեցմամբ: Այսպես. *պոլսահայ*–Стамбул еրմәнисի, *տաճկահայ*–Туркијә еրմәниси, *պարսկահայ*–Иран еրմәниси և այլն, բայց և *լեհահայ*–полшалы еրմәни:

դ) **Հայերեն-իսպաներեն բառարան**<sup>35</sup>: Հ. Թեքեյանի բառարանում (պարունակում է 36 հազար բառ) արձանագրվել է «արտերկրի հայ» իմաստային խմբի 10 միավոր: Բառարանագիրը ներածական խոսքում նշում է, որ օգտվել է Մո. Մալխասյանցի, ակադեմիական և Էդ. Ադայանի բացատրական բառարաններից: Այդ է պատճառը, որ այս և հիշյալ բառարանների բառացանկերի միջև կան ակնհայտ ընդհանրություններ: Մալխասյանցի բառարանից այստեղ կան հետևյալ բառերը՝ *ամերիկահայ, եգիպտահայ, թրքահայ, լեհահայ, հնդկահայ, ռումանահայ* (չկան՝ *անգլիահայ, կովկասահայ, հունգարահայ, ռուսահայ*), ակադեմիականից և Ադայանից՝ գաղ(ու)թահայ, պարսկահայ, ֆրանսահայ: Գրանցված է նաև լիբանանահայ-ը, որը չկա վերոհիշյալ բառարաններում, բայց մինչ այդ արձանագրվել էր Մ. Գույումձյանի բառարանում (լիբանահայ ձևով) և Հովհ. Բարսեղյանի «Ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանում» (Եր., 1973):

Բառերը տրված են երկու արժեքով՝ ածական և գոյական, թարգմանելու միասնական մոտեցմամբ: Այսպես՝ *թրքահայ*-armenio de Turquia, *լիբանանահայ*-armenio del Libano, *հնդկահայ*-armenio de la India, *պարսկահայ*-armenio de Persia, *ռումանահայ*-armenio de Rumania, *ֆրանսահայ*-armenio de Francia:

<sup>33</sup> Տե՛ս Ռ. Բադրամյան, Ի. Խալիլով, Հայ-ադրբեջաներեն բառարան, Եր., 1978:

<sup>34</sup> Տե՛ս «Մամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ.հ. 1-4, Եր., 1969-1980: Վերջին հատորը լույս է տեսել 1980-ին (քննարկվող բառարանի հրատարակվելուց երկու տարի անց), բայց արդեն կար Էդ. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (Եր., 1976), որտեղ գրանցված էին *չերքեզահայ*-ը և *պարսկահայ*-ը (*պոլսահայ*-ը ոչ. սա կա ակադեմիականում, որի քարտարանը Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կարող էր լինել հասանելի բառարանագիրներին):

<sup>35</sup> Տե՛ս Յ. Թեքեյան, Բառարան հայերեն սպաներեն, Բուենոս Այրես, 1984:

Թարգմանության միասնական մոտեցումից ընդամենը երկու շեղում կա: *Եգիպտոսահայ*-ի թարգմանության մեջ ընդգծվում է Եգիպտոսում ապրելու հանգամանքը՝ *armenio que vive en Egipto* (բառը, ի դեպ, համարվել է միայն գոյական): *Ամերիկահայ*-ը թարգմանվել է *armenio americano*, այսինքն՝ «ամերիկյան հայ»:

«Արտերկրի հայ» նշանակող միայն մեկ մասնավոր անվան հավաքական գոյականը՝ որպես հաջորդ գլխաբառ, ևս տրվում է՝ *լեհահայ*-*armenio de Polonia* և *լեհահայություն*-*los armenios de Polonia*: *Գաղութահայ*-ից հղվում է *գաղթահայ*-ին, որը համարվել է գոյական, նորաբանություն՝ *armenio que vive fuera de su patria, en otros paises como emigrante*; *armenio emigrado* թարգմանությամբ (բառացի՝ «հայ, որն ապրում է հայրենիքից դուրս, այլ երկրներում՝ որպես գաղթական, հայ տարագիր»): Այդպես էլ նորաբանություն է համարվել նրա հավաքականը՝ *գաղթահայություն*-ը: Այս բառերը 20-րդ դարի 20-ական թվականներից գործածության մեջ են եղել, ուստի այդ պիտակումը ճիշտ չէ:

Հայերեն-իսպաներեն բառարանում չի արձանագրվել *տաճկահայ*-ը, որ կա ակադեմիայի և Ադայանի բառարաններում, արևմտահայերենում հաճախական բառ է (թեպետ ունի *տաճկահայերեն*-ը): Այդպես նաև սպասելի *սփյուռքահայ*-ը:

Բառարանում չեն հանդիպում նաև Հարավային Ամերիկայի երկրների հայերին անվանող բառերը՝ *արժանցիկահայ* (ակադեմիական բացատրականն ունի *արգենտինահայ* ձևով), *սյրագիլահայ*<sup>36</sup>, *ուրուգուահայ*:

ե) *Հայ-գերմաներեն բառարան*<sup>37</sup>: Գլխաբառ են դարձել *սփյուռքահայ*-ը և *տաճկահայ*-ը: *Սփյուռքահայ*-ը դիտվել է երկարժեք՝ 1. ած. *auslandsarmenisch*, 2. գոյ. *Auslandsarmenier* (բառացի՝ «արտասահմանի հայ»), իսկ *տաճկահայ*-ը՝ մեկ, գոյականի՝ *Armenier aus der Turkei* (բառացի՝ «հայ Թուրքիայից»): Բառերի ընտրությունը հիմնավորելի է: Տրված է բառախմբի ընդհանուր անունը՝ *սփյուռքահայ*, և մեկ մասնավոր անուն՝ *տաճկահայ*, որը մյուսների համեմատ դժվարատալ էլ է կարծվել (*տաճիկ* «թուրք» / *Տաճկաստան* «Թուրքիա»): Այս մոտեցումն ընդունելի է: Մասնավոր անունների մեջ ընտրություն կատարելն առհասարակ դյուրին չէ: Եթե ընդգրկվեին ամենահաճախական բառերից, օրինակ, *ամերիկահայ*-ը և *ֆրանսահայ*-ը, ապա չպիտի լինեին նաև Գերմանիայում, գերմանախոս կամ հարևան երկրներում, առհասարակ տարածաշրջանում ապրող հայերը, ինչպես՝ *գերմանահայ*, *ավստրիահայ*, *շվեյցարահայ*, *հոլանդահայ* / *նիդեռլանդահայ*, *շվեդահայ*, *բելգիահայ*, թեպետ սրանք հայերեն միալեզվյան բառարաններում հիմնականում արձանագրված չեն: Թերևս այդ պատճառով մասնավոր անուններն ուղղակի չեն ներառվել:

<sup>36</sup> Սա առհասարակ բառարանային գրանցում չունի նաև հայերեն միալեզվյան բառարաններում:

<sup>37</sup> Տե՛ս Յու. Գաբրիելյան և ուրիշներ, *Հայ-գերմաներեն բառարան*, Քյոլն, 2000:

զ) **Հայ-բուլղարերեն բառարան**<sup>38</sup>: Այստեղ գլխաբառ են դարձել՝ *ամերիկահայ, հունահայ, ռուսահայ, սփյուռքահայ, տաճկահայ, ֆրանսահայ*: Բառընտրությունը հնարավոր չէ հիմնավորել: Կարելի է, օրինակ, ասել, որ *սփյուռքահայ*-ն իմաստային խմբի միջուկային միավոր է, ընդհանուր անուն, *ռուսահայ*-ը և *տաճկահայ*-ը նաև «արևելահայ» և «արևմտահայ» նշանակող բառեր են (միննույն ժամանակ՝ «Տաճկաստանի՝ Թուրքիայի ու Ռուսաստանի հպատակ քաղաքացի հայ»), *ամերիկահայ*-ը աշխարհի ամենաստվար հայկական համայնքի ներկայացուցիչն է, բայց երբ մեջտեղ են գալիս *ֆրանսահայ*-ը և *հունահայ*-ը, հարց է առաջանում. իսկ ինչո՞ւ չկան *լիբանանահայ*-ը, *սիրիահայ*-ը, *ռուսինահայ*-ը կամ *հունգարահայ*-ը: Չկա մասնավորապես *բուլղարահայ*-ը, որ սպասելի էր հենց այս բառարանում (բնականաբար, այստեղ կան *բուլղար, բուլղարացի, բուլղարուհի* բառերը):

Բառարանում գետեղված հիշյալ բառերից *հունահայ, ռուսահայ, տաճկահայ, ֆրանսահայ*-ը համարվել են գոյականներ, *ամերիկահայ*-ը ածական, *սփյուռքահայ*-ի խոսքիմասային արժեքի մասին նշում չկա: Այս բառերը բուլղարերեն հիմնականում միանման են թարգմանվել: Երկու մոտեցում է դրսևորվել. *ռուսահայ*–руски арменец, *հունահայ*–гръцки арменец, *ամերիկահայ*–американски арменец կամ *ֆրանսահայ*–арменец живеещ във Франция, *սփյուռքահայ*–арменец, който живее в диаспората:

է) **Հայ-շվեդերեն բառարան**<sup>39</sup>: 32 հազար բառ պարունակող այս բառարանում սկզբունքային մոտեցում է որդեգրվել. մեզ հետաքրքրող բառերից հանդիպում է միայն *սփյուռքահայ*-ը՝ armenier som bor i diaspora (բառացի՝ «սփյուռքում բնակվող հայ»), տրված է նաև նրանից կազմված հավաքական գոյականը՝ *սփյուռքահայություն*: Ուշագրավ է, որ որևէ ազգի առնչվող բառերը տրվում են այսպես՝ երկրանունից կազմված ածական, տվյալ երկրացի, տվյալ ազգի իգական սեռի ներկայացուցիչ, հաճախ նաև լեզուն, ինչպես՝ *արգենտինական, արգենտինացի, արգենտինուհի*, բայց *արգենտինահայ*-ը չկա: Այդպես բառարանում կան հայերենում գրեթե անգործածական *սիրիուհի, լիբանանուհի* բառերը, բայց տվյալ երկրներում զգալի ներկայություն ունեցող հայերին անվանող *սիրիահայ, լիբանանահայ* բառերը, նաև *շվեդահայ*-ը՝ ոչ: Ամեն դեպքում բառարանագիրը հետևողական է եղել:

ը) **Հայերեն-պարսկերեն բառարան**<sup>40</sup>: Շուրջ 20 000 բառ և արտահայտություն պարունակող երևանյան բառարանում «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորներից գրանցվել են երեքը: Ուշագրավ է, որ այստեղ առանձին տրվում են *իրանահայ*-ը և *պարսկահայ*-ը (վերջինիս կողքին փակագծերում *իրանահայ*-ը ևս), երկուսն էլ գոյականի արժեքով: Մա կարևոր է նրանով, որ թարգմանական բառարանում գետեղված է տվյալ լեզվի երկրի հայ նշանակող բառը (այս դեպքում՝ հունանիշ բառերը): Այս

<sup>38</sup> Տե՛ս Մ. Թերզյան, Հայ-բուլղարերեն, բուլղարերեն-հայերեն բառարան, Եր., 2006:

<sup>39</sup> Տե՛ս Պողոս Արո, Հայ-շվեդերեն բառարան, Սթոքհոլմ, 2007:

<sup>40</sup> Տե՛ս Տ. Դավթյան, Հայերեն-պարսկերեն բառարան, Եր., 2011:



բառարանը թերևս միակն է, որտեղ արձանագրված են ինչպես *պարսկահայ*-ը, այնպես էլ *իրանահայ*-ը: Բառացանկում առկա է նաև *վիրահայ*-ը, որ չի հանդիպում հայերեն թարգմանական որևէ բառարանում: Բառարանում կա *սփյուռքահայություն*-ը, բայց չկա *սփյուռքահայ*-ը:

«Արտերկրի հայ» իմաստային խմբի միավորներից թարգմանական բառարաններում գրանցվել են *ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, գաղ(ու)թահայ, եգիպտահայ, թ(ու)րքահայ, իտալահայ, իրանահայ, լեհահայ, լիբան(ան)ահայ, կովկասահայ, հունահայ, հունգարահայ, չեքոսլովակահայ, պարսկահայ, պոլսահայ, պուլկարահայ, ռումինահայ / ռումանահայ, ռուսահայ, սփյուռքահայ, վիրահայ, տաճկահայ, ֆրանսահայ* բառերը, ընդամենը 23 միավոր (հայերեն միալեզվյան տարատեսակ բառարաններում դրանց թիվը 51 է):

Այս ցանկը ցույց է տալիս որևէ բառարանում սոսկ արձանագրվելու փաստը, իսկ բառարաններում ընդգրկվածության պատկերը խայտաբղետ է. բառեր կան, որոնք բառարաններում հաճախ են հանդիպում, բառեր էլ կան, որոնք ընդամենը մեկ անգամ են արձանագրվել: Այսպես, քննարկված բառարաններից 12-ում հանդիպում է *տաճկահայ*-ը: Այս ցուցանիշը լիովին հասկանալի է: *Տաճկահայ*-ը («Տաճկաստանի` Թուրքիայի հայ») ժամանակագրորեն իմաստային խմբի առաջին բառերից է, անվանում է հայության ամենաստվար հատվածի` արևմտահայության ներկայացուցիչներին (նշանակում է նաև «արևմտահայ»), հաճախադեպ է, մյուսների համեմատ բառապատկերի անմիջական ընկալման որոշակի դժվարություն ունի, ուստիև թարգմանվելու կարիք:

Բառարաններից 11-ում հանդիպում է *սփյուռքահայ*-ը: Սա ևս բացատրելի է: Այս բառը ժամանակագրական առումով թեև նոր է, սակայն իմաստային խմբի միջուկային միավորն է, հաճախական բառ: Ուստի բառարանագիրների մոտեցումը միանգամայն ճիշտ է: Այնուհետև ըստ նվազող հաջորդականության գալիս են սրանք` *ֆրանսահայ* (11 անգամ), *պարսկահայ, ռուսահայ* և *ռումանահայ / ռումինահայ* (10-ական անգամ), *ամերիկահայ* (9 անգամ):

*Ռուսահայ*-ի բարձր ցուցանիշը բացատրվում է *տաճկահայ*-ի նման. նշանակում է նաև «արևելահայ» և գործածության մեծ հաճախականություն ունի: *Պարսկահայ*-ն անվանում է հայկական հնագույն և հայրենիքին ամենից մոտ գտնվող կենսունակ գաղութներից մեկի ներկայացուցիչներին, իսկ որպես ածական վերաբերում է գաղութին առնչվող իրողություններին: *Ֆրանսահայ*-ը և *ամերիկահայ* -ը վերաբերում են հայկական ամենաստվար և ազդեցիկ համայնքներին: *Ռումանահայ / ռումինահայ*-ը պատմական արժեք ունի. Ռումինիայի հայ համայնքը Եվրոպայում հնագույններից է և կարևոր դեր է ունեցել հատկապես 15-19-րդ դարերում:

*Արգենտինահայ, իտալահայ, չեքոսլովակահայ, պոլսահայ, վիրահայ* բառերը թարգմանական բառարաններում հանդիպում են միայն մեկ անգամ:

Եզրակացություններ:

1. «Արտերկրի հայ» իմաստային խմբի միավորները հայերեն թարգմանական բառարաններում արձանագրվել են ավելի վաղ, քան միալեզվյան բառարաններում: Արձանագրումն սկսվել է նախասփյուռքյան շրջանում՝ 20-րդ դարի առաջին տասնամյակից: Առաջին անգամ համակարգված եղանակով՝ Հ. Դադբաշյան, «Լիակատար բառարան հայերենից ռուսերեն», Թիֆլիս, 1911:

2. «Արտերկրի հայ» իմաստային խմբի 23 բառեր գրանցվել են թարգմանվել են արևելահայերենի և արևմտահայերենի տարբեր բառարաններում՝ հայ(երեն)-ռուսերեն / անգլերեն / ֆրանսերեն / գերմաներեն / բուլղարերեն / շվեդերեն / պարսկերեն / քրդերեն / արաբերեն / ադրբեջաներեն և այլն:

3. Թարգմանական բառարաններում «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորներից ամենահաճախ հանդիպողներն են՝ **տաճկահայ, սփյուռքահայ, ֆրանսահայ, ռուսահայ, ամերիկահայ, պարսկահայ, ռուսիահայ**: Այդ կարգի որոշ բառեր թարգմանական բառարաններում հանդիպում են միայն մեկ անգամ, շատերը երբևէ չեն բառարանագրվել:

4. Իմաստային խմբի բառերը հիմնականում ներկայացվում են գոյականի արժեքով, ավելի քիչ՝ ածականի, երբեմն էլ՝ երկարժեք (գոյ., ած.): Որպես կանոն՝ նրանք թարգմանվում են նկարագրական եղանակով, տարբեր կապակցությունների միջոցով (բացառությամբ **սփյուռքահայ**-ի, որի գերմաներեն համարժեքը բառ է):

5. Հայերենի թարգմանական բառարանների բառացանկերում կարելի է բնոգրկել սփյուռքի ամենամեծ և ազդեցիկ, ինչպես նաև թարգմանող լեզվի երկրի (երկրների) հայկական համայնքների ներկայացուցիչների անունները:

**Բանալի բառեր** – *հայերեն թարգմանական բառարան, «արտերկրի հայ» իմաստային խումբ, տաճկահայ, ռուսահայ, պարսկահայ, սփյուռքահայ, ֆրանսահայ, ամերիկահայ, ռուսիահայ*

**ДАВИД ГЮРДЖИНЯН** – *Представление слов семантической группы “зарубежный армянин” в переводных словарях армянского языка.* – Лексические единицы семантической группы “зарубежный армянин / армянин диаспоры” включены в переводные словари армянского языка раньше, чем в одноязычные. Впервые это произошло в “Полном армяно-русском словаре” А. Дагбашяна (1911, Тифлис).

В переводных словарях восточноармянского и западноармянского языков (армяно-русского / французского / английского / немецкого / болгарского / шведского / персидского / курдского / арабского / азербайджанского) зафиксированы 23 единицы исследуемой группы.

Чаще всего в переводных словарях встречаются: **տաճկահայ** “турецкий армянин”, **սփյուռքահայ** “армянин из диаспоры”, **ֆրանսահայ** “армянин, проживающий во Франции”, **պարսկահայ** “армянин, проживающий в Иране”, **ռուսահայ** “российский армянин, армянин, проживающий в России”, **ամերիկահայ** “армянин, проживающий в США”.

Исследуемые слова переводятся описательным способом, посредством различных грамматических конструкций (*ֆրանսահայ* – “армянин, проживающий во Франции”, “французский армянин”, “армянин из Франции”), лишь в немецком языке эквивалент лексемы *սփյուռքահայ* – сложное слово.

**Ключевые слова:** семантическая группа “зарубежный армянин / армянин диаспоры”, переводные словари армянского языка, турецкий армянин, армянин, проживающий во Франции, армянин, проживающий в Иране, армянин, проживающий в США, сложное слово

**DAVIT GYURJINYAN – Presentation of the Words of the Semantic Group “Foreign Armenian” in the Translation Dictionaries of the Armenian Language.** – The lexical units of the semantic group “Foreign Armenian/Armenian from Diaspora” were recorded in the translation dictionaries of the Armenian language before they appeared in Armenian monolingual dictionaries. They were first recorded in the Armenian-Russian dictionary by H. Daghbashyan (Tiflis, 1911).

23 units of the group under study are recorded in translation dictionaries of the Eastern and Western Armenian languages (Armenian-Russian / French / English / German / Bulgarian / Swedish / Persian / Kurdish / Arabic / Azerbaijani).

The following units are more often found in translation dictionaries: *տաճկահայ* “Turkish Armenian”, *սփյուռքահայ* “Armenian from Diaspora”, *ֆրանսահայ* “Armenian living in France”, *պարսկահայ* “Armenian living in Iran”, *ռուսահայ* “Russian Armenian, Armenian living in Russia”, *ամերիկահայ* “Armenian living in the USA”.

The words under study are translated descriptively through various grammatical structures (*ֆրանսահայ* - “Armenian living in France”, “French Armenian”, “Armenian from France”), only in German the equivalent of the lexeme *սփյուռքահայ* is a compound word.

**Key words:** the semantic group “Foreign Armenians/Armenians from Diaspora”, the translation dictionaries of the Armenian language, Armenians from Diaspora, Armenians living in France, Russian Armenians, Armenians living in Russia, Armenians living in Iran, Armenians living in America, Armenians living in Romania, a compound word